



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԻՑ

ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ

ՊԱՐԶԵՑՎԱԾ
ՀԱՐԿՄԱՆ
ՌԵԺԻՄ

ՀԱՐԿԵՐԸ
ԵՎ
ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ

**ՊԱՐԶԵՑՎԱԾ
ՀԱՐԿՄԱՆ
ՌԵԺԻՍ**

Պարզեցման հարկման ռեժիմ: — Եր., Դ-ար, 2007, 32 էջ:

Սույն գրքույկը նախատեսված է փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների համար: Այն օգտակար և կարևոր տեղեկություններ է պարունակում պարզեցված հարկով հարկման ռեժիմի վերաբերյալ:

Սույն գրքույկի ցանկացած մաս չի թույլատրվում որևէ կերպ փոխանցել կամ արտատպել առանց ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության գրավոր թույլտվության:

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
2. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ	4
3. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԸ	5
4. ԻՆՉՊԵՍ ԴԱՌՆԱԼ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ	5
4.1. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԴԵՊՋՈՒՄ	5
4.2. ՆՈՏԱՐՆԵՐԻ ԴԵՊՋՈՒՄ	6
5. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ՀԱՄԱՐՎԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ	7
6. Ո՞Ր ԴԵՊՋԵՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ԶԷ ՀԱՄԱՐՎԵԼ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ	10
7. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՋԵՐԸ	14
8. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ	17
9. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ	18
10. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ	19
11. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԳԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	20
12. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՌԵԺԻՄԻՑ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿՈՎ ՀԱՐԿՄԱՆ ՌԵԺԻՄԻՆ ԱՆՑՆԵԼԸ	22
13. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿԻ ՌԵԺԻՄԻՑ ՀԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԵԺԻՄԻՆ ԱՆՑՆԵԼԸ	23
14. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎԱՐՎՈՂ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ	25
ՀԱՎԵԼՎԱԾ 1	26
ՀԱՎԵԼՎԱԾ 2.	28
ՀԱՎԵԼՎԱԾ 3.	30
ՀԱՎԵԼՎԱԾ 4.	31

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն գրքույկը նախատեսված է փոքր և միջին բիզնեսի ներկայացուցիչների համար: Այն օգտակար և կարևոր տեղեկություններ է պարունակում պարզեցված հարկով հարկման ռեժիմի վերաբերյալ:

2. ՊԱՐԶԵՑՎԱԾ ԿԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Պարզեցված հարկման ռեժիմի ներդրման¹ նպատակն էր ավելի բարենպաստ հարկային դաշտ ստեղծել փոքր և միջին բիզնեսի համար՝ պարզեցնելով հաշվետվությունների համակարգը, նվազեցնելով վարվող գրանցամատյանների և գրքերի քանակը, կրճատելով վճարվող հարկերի թիվը: Պարզեցված հարկման ռեժիմը սովորաբար թեթևացնում է նաև հարկային բեռը:

Եթե ընդհանուր կարգով հարկման ռեժիմում հարկ վճարողները գործ են ունենում ավելացված արժեքի (ԱԱՀ) և շահութահարկի (եկամտահարկի²) հետ, ապա պարզեցված հարկման ռեժիմի դեպքում դրանց փոխարինում է մեկ հարկատեսակ՝ պարզեցված հարկը:

Արդյունքում՝ հարկ վճարողի համար հարկերի հաշվարկումն ու բյուջե վճարումը դառնում է շատ ավելի պարզ, նվազ ժամանակատար և պակաս աշխատատար:



ՀՀ-ում գործում են հարկման հետևյալ ռեժիմները՝
ա) ընդհանուր կարգով հարկման ռեժիմ,
բ) պարզեցված հարկով հարկման ռեժիմ,
գ) հաստատագրված վճարով հարկման ռեժիմ:

1 «Պարզեցված հարկի մասին» ՀՀ օրենք, ընդունված ՀՀ ԱԺ-ի կողմից 2000 թ. հունիսի 5-ին:

2 Ֆիզիկական անձանց դեպքում:

3.

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՇԱՐԿ ԿՃԱՐՈՂՆԵՐԸ

Պարզեցված հարկ վճարող կարող են դառնալ.

- առևտրային կազմակերպությունները,
- անհատ ձեռնարկատերերը,
- նոտարները:

Առևտրային կազմակերպությունների համար պարզեցված հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և շահութահարկին, իսկ անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ ԱԱՀ-ին և եկամտահարկին:

Ուշադրություն

Պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով կասեցվում են ԱԱՀ-ի և շահութահարկի (եկամտահարկի) արտոնությունները, հաշվի չեն առնվում համախառն եկամտից նվազեցումները, ԱԱՀ վճարող համարվելու համար օրենքով սահմանված չափը:

4.

ԻՆՉՊԵՏ ԴԱՌՆԱԼ ՊԱՐԶԵՑՎԱԾ ՇԱՐԿ ԿՃԱՐՈՂ

4.1. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՇԱՏ ԶԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԴԵՊՈԸՄ

Առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը, պարզեցված հարկ վճարող դառնալու համար, պետք է հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնեն **Հայտարարագիր** (տե՛ս հավելված 1): Ընդ որում՝

- **Նոր ստեղծված** (պետական գրանցում ստացած) առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը Հայտարարագիրը պետք է ներկայացնեն **մեկամսյա ժամկետում** (բայց պետական գրանցման եռամսյակի վերջին օրվանից ոչ ուշ),
- **Մյուս բոլոր դեպքերում** առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը Հայտարարագիրը պետք է ներկայացնեն **ամեն տարի, հունվարի 1-25-ը** (ներառյալ) ընկած ժամանակահատվածում:

5. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՆԱՐԿ ԿՃԱՐՈՂ ՇԱՄԱՐԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պարզեցված հարկ վճարող համարվելու համար անհրաժեշտ է, որ պետի հարկ վճարողը բավարարի հետևյալ պայմանները.

Ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով նախորդ տարում մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության (առանց ԱԱՀ-ի) ընդհանուր գումարը չպետք է գերազանցի 50 մլն դրամը (բացառությամբ նոտարների):

Ուշադրություն

Եթե հարկ վճարողները հարկային մարմին ներկայացրած Հայտարարագրում նշել են այդ պայմանի բավարարման մասին, սակայն իրականում պայմանը խախտված է եղել, ապա վճարում են **տուգանք՝** սահմանաչափը գերազանցող մասի 20%-ի չափով, և հարկման ռեժիմների փոփոխություն **չի կատարվում** (այսինքն՝ մինչև այդ հաշվետու տարվա վերջը հարկ վճարողը շարունակում է համարվել պարզեցված հարկ վճարող):

Ուշադրություն³

Եթե տվյալ տարվա ընթացքում պարզեցված հարկ վճարողը ունեցել է 50,0 մլն դրամից ավելի իրացման շրջանառություն, ապա պարզեցված հարկ վճարողը **դադարում է** համարվել այդպիսին նշված փաստը **տեղի ունենալու պահից:**

ՕՐԻՆԱԿ

«Լաթար» ՍՊԸ-ն 2006թ. համարվել է պարզեցված հարկ վճարող: 2006թ. առաջին եռամսյակի իրացման շրջանառությունը կազմել է 45.0 մլն դրամ: Ընկերությունն ապրիլի 8-ին վաճառում է ապրանք՝ 6.8 մլն դրամով, որը, գումարվելով 45.0 մլն դրամին, գերազանցում է

3 Այս պայմանը չի վերաբերում նոտարներին:

50.0 մլն դրամը 1.8 մլն դրամով: Այս դեպքում դուրս է գրվում հաշիվ-ապրանքագիր (հարկային հաշիվ), որտեղ առանձին տողով նշվում է պարզեցված հարկով հարկվող շրջանառությունը (5.0 մլն դրամ՝ մինչև 50.0 մլն դրամը լրանալը), ԱԱՀ-ով հարկվող շրջանառությունը (1.5 մլն դրամ՝ 50.0 մլն դրամը գերազանցող մասով) և ԱԱՀ-ի գումարը (0.3 մլն դրամ):

Տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները (այդ թվում՝ տույժերը և տուգանքները) պետք է պակաս լինեն 100 հազար դրամից:

Ուշադրություն

Եթե հարկ վճարողները հարկային մարմնին ներկայացված Հայտարարագրում **նշել են** այդ պայմանի բավարարման մասին, սակայն իրականում պայմանը **խախտված է եղել**, ապա կատարվում է հարկման **ռեժիմների փոփոխություն** (այսինքն՝ տարվա սկզբից հարկ վճարողը հարկվում է ընդհանուր կարգով հարկման ռեժիմով):

Այս պայմանը **չի կիրառվում** հարկ վճարողի մոտ հետագայում կատարված ստուգմամբ արձանագրված խախտումների հետևանքով առաջադրված հարկային պարտավորությունների նկատմամբ:

Եթե այս պայմանը խախտվում է հաշվետու տարվա ընթացքում (հաշվետու եռամսյակին հաջորդող առաջին ամսվա 1-ի դրությամբ պարզեցված հարկ վճարողի հարկային պարտավորությունները 100 հազար դրամ և ավելի են), ապա պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին փաստը տեղի ունենալու **եռամսյակին հաջորդող ամսվա 1-ից**:

Ուշադրություն

Ժամկետանց հարկային պարտավորությունների կազմում ներառվում են նաև գույքահարկը, հողի հարկը, ինչպես նաև հարկային օրենսդրությամբ սահմանված տույժերի և տուգանքների գումարները:

Եթե նախորդ տարում Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծվել են ապրանքներ, որոնց համար ԱԱՀ չի վճարվում ներմուծման պահին⁴, ապա այդ ապրանքների չիրացված մնացորդը⁵ տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ չպետք է գերազանցի 1 մլն դրամը:

ՕՐԻՆԱԿ

«Լաթար» ՍՊԸ-ն 2006թ. ընթացքում «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծել է 4.8 մլն դրամ մաքսային արժեքով այնպիսի ապրանքներ, որոնց համար նախատեսված չէր ԱԱՀ-ի վճարում ներմուծման պահին: 2007թ. հունվարի 1-ի դրությամբ դրանց՝ դեռևս չիրացված մասի մաքսային արժեքը կազմում է 1.4 մլն դրամ: Այս դեպքում «Լաթար» ՍՊԸ-ն 2007թ. ընթացքում չի կարող համարվել պարզեցված հարկ վճարող:

Ուշադրություն

Այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների համար օրենքով նախատեսված չէ ԱԱՀ-ի գանձում մաքսային մարմինների կողմից, հարկ վճարողները կարող են, իրենց կողմից մաքսային մարմիններին ներկայացված դիմումի հիման վրա, ներմուծման պահին **վճարել ԱԱՀ-ի այդ գումարը** (այն արտացոլվում է մաքսային հայտարարագրում) և սահմանված կարգով **համարվել պարզեցված հարկ վճարող՝** անկախ չիրացված մնացորդի պայմանից: Ընդ որում, մաքսային սահմանին վճարված ԱԱՀ-ի այդ գումարները միացվում են ակտիվի ձեռքբերման արժեքին:

Ուշադրություն

Եթե հարկ վճարողները հարկային մարմին ներկայացրած Հայտարարագրում **նշել են** 1 մլն դրամը չգերազանցելու պայմանի բավարարման մասին, սակայն իրականում պայմանը **խախտված է եղել**, ապա վճարում են **տուգանք՝** սահմանաչափը գերազանցող մասի **50%-ի չափով**, և հարկման ռեժիմների փոփոխություն չի կատարվում (այսինքն՝ մինչև այդ հաշվետու տարվա վերջը հարկ վճարողը շարունակում է համարվել պարզեցված հարկ վճարող):

4 Մաքսային մարմինների կողմից մաքսային հայտարարագրի կնքման (ապրանքների բացթողման) ամսաթվին:

5 Մնացորդը հաշվարկվում է ապրանքների մաքսային արժեքով:

6.

Ո՞Ր ԴԵՊՔԵՐՈՒՄ ԸՆԱՐԱՎՈՐ ՉԷ ԸՍՍԱՐՎԵԼ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆՐԿ ՎՃԱՐՈՂ

- Հարկ վճարողը չի կարող համարվել պարզեցված հարկ վճարող, եթե հանդիսանում է.
 - ակցիզային հարկով (դրա փոխարեն՝ հաստատագրված վճարով) հարկվող ապրանքների արտադրող,
 - բանկ, գրավատուն, վարկային կամ ապահովագրական կազմակերպություն, ներդրումային հիմնադրամ, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակից,
 - արտարժույթի առքուվաճառքի, արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն իրականացնող,
 - խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպիչ,
 - գովազդակիր՝ արտաքին գովազդի ծառայությունների մասով,

Ուշադրություն

Եթե հարկ վճարողները հարկային մարմնին ներկայացված Հայտարարագրում **նշել են** այս պայմանների բավարարման մասին, սակայն իրականում պայմանը **խախտված է եղել**, ապա վճարում են **տուգանք՝ 100,0 հազ. դրամի** չափով, և հարկման ռեժիմների փոփոխություն չի կատարվում (այսինքն՝ մինչև այդ հաշվետու տարվա վերջը հարկ վճարողը շարունակվում է համարվել պարզեցված հարկ վճարող):

Միաժամանակ, եթե այդ փաստը տեղի է ունենում հաշվետու տարում, ապա պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին՝ փաստը տեղի ունենալու պահից:

- գյուղատնտեսական արտադրանք արտադրող,

Ուշադրություն

Արտադրողի կողմից ՀՀ-ում արտադրված գյուղատնտեսական արտադրանքի իրացումն ազատված է ԱԱՀ-ից (մինչև 2009թ. հունվարի 1-ը) և շահութահարկից (եկամտահարկից):

- համատեղ գործունեության պայմանագրի կողմ:



Համատեղ գործունեության պայմանագիրը գրավոր պայմանագիր է, որի համաձայն երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և, առանց իրավաբանական անձ կազմավորելու, գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

ՕՐԻՆԱԿ

Օրինակ՝ «Լաթար» ՍՊԸ-ն և «Մուշ» ՓԲԸ-ն որոշում են համատեղ իրականացնել առևտրական գործունեություն: Այդ նպատակով, «Լաթար» ՍՊԸ-ն տրամադրում է գույքը, սարքավորումները և աշխատուժը, իսկ «Մուշ» ՓԲԸ-ն՝ խանութը: Մտայված շահույթի 35%-ը բաժին է հասնելու «Լաթար» ՍՊԸ-ին, իսկ 65%-ը՝ «Մուշ» ՓԲԸ-ին: Այդպիսով՝ «Լաթար» ՍՊԸ-ն և «Մուշ» ՓԲԸ-ն չեն կարող համարվել պարզեցված հարկ վճարող:

Ուշադրություն

Եթե հարկ վճարողները հարկային մարմնին ներկայացված Հայտարարագրում նշել են այդ պայմանի բավարարման մասին, սակայն իրականում պայմանը խախտված է եղել, ապա կատարվում է հարկման ռեժիմների փոփոխություն (այսինքն՝ հաշվետու տարվա սկզբից հարկ վճարողը հարկվում է ընդհանուր հարկման ռեժիմով):

Միաժամանակ, եթե այդ փաստը տեղի է ունենում հաշվետու տարում, ապա պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին փաստը տեղի ունենալու պահից:

- Հարկ վճարողը չի կարող համարվել պարզեցված հարկ վճարող, եթե իրականացնում է.

- **իրավունքի**, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառի գործունեություն, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն (այդ թվում՝ փաստաբանների գործունեություն, խորհրդատվություն իրավաբանական հարցերով, գործունեություն հաշվապահական հաշվառման բնագավառում, աուդիտորական գործունեություն, շուկայի իրավիճակի հետազոտում և հասարակական

կարծիքի բացահայտում, խորհրդատվություն առևտրային գործունեության և կառավարման հարցերով, կազմակերպությունների կառավարմանը վերաբերող գործունեություն)՝ բացառությամբ խորհրդատվական ծառայություններ մատուցող նոտարների,

- **հանքագործական** արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազննման և փորձաքննության գործունեություն,

Ուշադրություն

Եթե հարկ վճարողները հարկային մարմնին ներկայացված Հայտարարագրում նշել են այս պայմանների բավարարման մասին, սակայն իրականում պայմանը խախտված է եղել, ապա վճարում են տուգանք՝ 100,0 հազ. դրամի չափով, և հարկման ռեժիմների փոփոխություն չի կատարվում (այսինքն՝ մինչև այդ հաշվետու տարվա վերջը հարկ վճարողը շարունակում է համարվել պարզեցված հարկ վճարող):

Միաժամանակ, եթե այդ փաստը տեղի է ունենում հաշվետու տարում, ապա պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին փաստը տեղի ունենալու պահից:

- **լիցենզավորման ենթակա** այնպիսի գործունեություն կամ ունի լիցենզիա, որոնց գործունեության լիցենզիայի համար պետական տուրքի տարեկան գումարը գերազանցում է 1.0 մլն դրամը:

Ուշադրություն

Եթե հարկ վճարողները հարկային մարմնին ներկայացված Հայտարարագրում նշել են այդ պայմանի բավարարման մասին, սակայն իրականում պայմանը խախտված է եղել, ապա կատարվում է հարկման ռեժիմների փոփոխություն (այսինքն՝ հաշվետու տարվա սկզբից հարկ վճարողը հարկվում է ընդհանուր հարկման ռեժիմով):

Միաժամանակ, եթե այդ փաստը տեղի է ունենում հաշվետու տարում, ապա պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին փաստը տեղի ունենալու պահից:

■ **Հարկ վճարողը չի կարող համարվել պարզեցված հարկ վճարող, եթե.**

ա) նրա կանոնադրական կապիտալի 50% **և ավելի փայաբաժինը** (բաժնետոմսը, բաժնենմասը) **պատկանում է.**

- այլ պարզեցված հարկ վճարող առևտրային կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ, կամ
- այլ անձի, որին միաժամանակ պատկանում է պարզեցված հարկ վճարող առևտրային այլ կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% **և ավելի փայաբաժինը** (բաժնետոմսը, բաժնենմասը),

կամ

բ) **հանդիսանում է** պարզեցված հարկ վճարող այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% **և ավելի փայաբաժնի** (բաժնետոմսի, բաժնենմասի) **սեփականատերը:**

Ուշադրություն

Այս («բ») դեպքում, օրենքով սահմանված ժամկետում պարզեցված հարկ վճարող համարվելու նպատակով մեկից ավելի անձանց կողմից դիմում ներկայացված լինելու ժամանակ, պարզեցված հարկ վճարող է համարվում առաջինը դիմում ներկայացրած անձը:

ՕՐԻՆԱԿ

«Լաթար» ՍՊԸ-ի կանոնադրական կապիտալի 70%-ը պատկանում է «Մուշ» ՓԲԸ-ին: «Լաթար» ՍՊԸ-ն պարզեցված հարկ վճարող համարվելու համար դիմում է ներկայացրել 2007թ. հունվարի 10-ին, իսկ «Մուշ» ՓԲԸ-ն՝ հունվարի 18-ին: Այս դեպքում պարզեցված հարկ վճարող կարող է համարվել միայն «Լաթար» ՍՊԸ-ն:

Ուշադրություն

Եթե հարկ վճարողները հարկային մարմնին ներկայացված Հայտարարագրում **նշել են** այդ պայմանի բավարարման մասին, սակայն իրականում պայմանը **խախտված է եղել**, ապա կատարվում է հարկման **ռեժիմների փոփոխություն** (այսինքն՝ հաշվետու տարվա սկզբից հարկ վճարողը հարկվում է ընդհանուր հարկման ռեժիմով):

Վերոշարադրված պայմանները բավարարելու դեպքում տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու համար հարկ վճարողներն այդ տարվա հունվարի 1-ից 25-ը (ներառյալ) իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում **Հայտարարագիր`** պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելու և պայմաններին բավարարելու վերաբերյալ:

Այդ դեպքում հարկ վճարողը համարվում է պարզեցված հարկ վճարող՝ ձեռնարկատիրական գործունեության **քոլոր տեսակների մասով` քաջառությանը** այն տեսակների, որոնք հարկվում են **հաստատագրված վճարով:**

Ուշադրություն

Բացառվում է.

- *հաստատագրված վճարների փոխարինումը պարզեցված հարկով (այդ թվում` երբ հարկ վճարողը գերազանցել է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված համապատասխան սահմանային չափերը),*
 - *ինչպես նաև նույն հարկ վճարողի կողմից միաժամանակ պարզեցված հարկի և ընդհանուր հարկման ռեժիմի կիրառումը:*
-

7.

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՎԱՐԿԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՄԱՆ ԱՅԼ ԴԵՊՔԵՐԸ

Հարկ վճարողի համար պարզեցված հարկի գործողությունը դադարում է նաև հետևյալ դեպքերում.

- **Երբ հարկ վճարողը գրավոր դիմում է ներկայացրել իր հաշվառման վայրի հարկային մարմին` ընդհանուր կարգով հարկման ռեժիմին անցնելու վերաբերյալ:**

Ուշադրություն

Այս դեպքում պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին` դիմումը ներկայացնելու եռամսյակին հաջորդող ամսվա 1-ից:

- **Եթե պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում հարկ վճարողը թույլ է տվել ակտիվային հարկով հարկման ենթակա ապրանքների դրոշմավորման կարգին վերաբերող`**

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170⁷, 170⁸ կամ, 170⁹ կամ 170¹² հոդվածների մեկից ավելի խախտման դեպքեր⁶:

Ուշադրություն

Այս դեպքում պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին փաստը տեղի ունենալու եռամսյակին հաջորդող ամսվա 1-ից:

- Եթե եռամսյակի ընթացքում պարզեցված հարկ վճարողի կողմից Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված այնպիսի ապրանքների ներմուծման ծավալը, որոնց համար ԱՄՀ վճարված չի եղել ներմուծման պահին, գերազանցում է 250 հազար դրամը:

Ուշադրություն

Այս դեպքում պարզեցված հարկ վճարողը դադարում է համարվել այդպիսին փաստը տեղի ունենալու պահից:

- 6 ■ սահմանված կարգով ձեռք բերված կամ օգտագործված ակցիզային դրոշմանիշերն օտարելը, եթե դրանց քանակը չի գերազանցում 1000 հատ (հողված 170⁷),
- ապօրինի ձեռք բերված ակցիզային դրոշմանիշերով ապրանքներ դրոշմավորելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 200,0 հազար դրամը (հողված 170⁷),
- ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված (չվերադրոշմավորված) ապրանքներ իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 200,0 հազար դրամը (հողված 170⁸),
- ակցիզային դրոշմանիշերի՝ մեկից ավելի անգամ օգտագործման հնարավորությունը չբացատրող ձևով կամ դրոշմավորման ենթակա ապրանքները ոչ այդ արտադրատեսակի դրոշմավորման համար տրամադրված ակցիզային դրոշմանիշերով դրոշմավորված, ինչպես նաև որոշակի տարողության համար տրամադրված դրոշմանիշերով այլ տարողություն ունեցող տարաներով (տուփերով) տարայավորված՝ դրոշմավորված ապրանքներն իրացնելը, եթե այդ ապրանքների ընդհանուր արժեքը վաճառողի մոտ նշված (չնշված լինելու դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով որոշված) գներով չի գերազանցում 200,0 հազար դրամը (հողված 170⁹),
- ՀՀ կառավարության կողմից սահմանված՝ որոշակի թվագրումով դրոշմանիշերով դրոշմավորված ապրանքների իրացման թույլատրելի ժամկետներից հետո այդպիսի ապրանքներ իրացնելը (հողված 170¹²):

Ուշադրություն

Այն դեպքում, երբ ներմուծվող ապրանքների համար օրենքով նախատեսված չէ ԱԱՀ-ի գանձում մաքսային մարմինների կողմից, հարկ վճարողները կարող են իրենց կողմից մաքսային մարմիններին ներկայացված **դիմումի հիման վրա** ներմուծման պահին **վճարել ԱԱՀ-ի** այդ գումարը (այն արտացոլվում է մաքսային հայտարարագրում) և սահմանված կազով համարվել պարզեցված հարկ վճարող, ընդ որում, մաքսային սահմանին վճարված այդ ԱԱՀ-ի գումարները միացվում են ակտիվի ձեռքբերման արժեքին:

- եթե տվյալ տարվա որևէ պահին **խանութների, կրպակների (տաղավարների)** միջոցով առևտրական գործունեության մատուցող հարկ վճարողն ունեցել է **15 մլն դրամը գերազանցող՝** իրեն պատկանող ապրանքային մնացորդ (հաշվարկված ձեռքբերման և վաճառքի գների առավելագույնով):

Ուշադրություն

Սույն կետի դրույթները վերաբերում են հարկ վճարողին սեփականության իրավունքով պատկանող ապրանքային մնացորդին (վաճառքի համար նախատեսված գույքին), ընդ որում, կոմիսիոն հիմունքներով **վաճառքի համար** նախատեսված գույքը ներառվում է ապրանքային մնացորդի մեջ միայն կոմիտենտի մոտ:

Սույն կետի դրույթները չեն վերաբերում վաճառքի համար չնախատեսված գույքին, մասնավորապես՝ ոչ նյութական ակտիվներին, հիմնական միջոցներին, այն հումքին, նյութերին, արագամաշ առարկաներին, արտադրանքին, որոնք նախատեսված են սեփական սպառման համար):

Ուշադրություն

Այս դեպքում պարզեցված հարկ վճարողը **դադարում է** համարվել այդպիսին փաստը տեղի ունենալու պահից:

8.

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸԱՐԿՈՎ ԸԱՐԿՎՈՂ ՕԲՅԵԿՏԸ

Հարկվող օբյեկտ է համարվում հաշվետու ժամանակաշրջանում պարզեցված հարկ վճարողի կողմից մատակարարված ապրանքների և մատուցված ծառայությունների **իրացման շրջանառությունը**⁷:

Վարձակալության դեպքում վարձատուի իրացման շրջանառությունը վարձավճարն է, իսկ փոխառության դեպքում՝ տոկոսները: Իրացման շրջանառությունը ներառում է նաև ռոյալթիները:

Հարկվող օբյեկտը որոշելիս եկամուտների (իրացման շրջանառության) հաշվառումն իրականացվում է **հաշվեգրման եղանակով**՝ ելնելով եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու պահից (անկախ եկամտի փաստացի ստացման ժամկետից):

ՕՐԻՆԱԿ

«Լաթաթ» ՍՊԸ-ն 2006թ. դեկտեմբերի 10-ին վաճառում է ապրանք, որի դիմաց վճարը ստանում է 2007թ. հունվարի 19-ին:

Այս դեպքում ապրանքի վաճառքից իրացման շրջանառությունն առաջանում է 2006թ. դեկտեմբեր ամսին, այլ ոչ թե 2007թ. հունվարին, քանի որ վաճառված ապրանքների մատով սեփականության իրավունքի փոխանցումը, հետևաբար և, եկամտի ստացման իրավունքն առաջացել է 2006թ. դեկտեմբերին:

Ինչևէ, ոչ բոլոր եկամուտներն են հարկվում պարզեցված հարկով:

Ուշադրություն

Պարզեցված հարկով չեն հարկվում մասնավորապես հետևյալ եկամուտները.

- *ավանդներից և արժեթղթերից տոկոսները,*
- *շահաբաժինները,*
- *ապահովագրական հատույումները,*
- *անհատույց ստացված գույքը, պարտավորությունների զեղչումից կամ ներումից եկամուտները,*
- *պատճառված վնասի (կրած կորստի) հատույումից եկամուտները (եթե չի առաջանում իրացման շրջանառություն),*

7 Պարզեցված հարկում օգտագործվող «Իրացման շրջանառություն» հասկացությունը տարբերվում է այլ հարկատեսակներում կամ ընդհանրապես հաշվապահական հաշվառման մեջ օգտագործվող «Իրացման շրջանառություն» հասկացությունից:

- տույժերը և տուգանքները,
- դուրս գրված (դուրս գրման ենթակա) անհուսալի կրեդիտորական պարտքերի գումարները,
- նախկինում դուրս գրված անհուսալի դեբիտորական պարտքերի մարման գումարները (դուրս չգրված դեբիտորական պարտքի մարման դեպքում՝ դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստին կատարված մասհանումների գումարները),
- տվյալ տարում հայտնաբերված՝ նախորդ տարիներին պակաս ցույց տրված եկամուտները (ավել ցույց տրված ծախսերը):

9.

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՄԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ԵՎ ԸՆԾՎԱՐԿՈՒՄԸ

Պարզեցված հարկ վճարողներն ընթացիկ **եռամսյակի** համար հարկը հաշվարկում են իրացման շրջանառության նկատմամբ՝ հետևյալ դրույթաչափերով.

- խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության մասով՝ 3.5 %.

Ուշադրություն

Պարզեցված հարկ վճարողների համար, գործունեության այդ մասով, պարտադիր է հսկիչ-դրամարկղային մեքենաների (ՀԴՄ) կիրառումը:

Ուշադրություն

Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեությունը ներառում է խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով (այդ թվում՝ առևտրի իրականացման վայրերում (տոնավաճառ, շուկա և այլն) գտնվող) մանրածախ, մեծածախ և (կամ) կոմիսիոն առևտուրը:

Օրինակ

«Լաթար» ՍՊԸ-ն, որը խանութների միջոցով իրականացնում է առևտրական գործունեություն, 2007թ. առաջին եռամսյակում ունեցել է 11.4 մլն դրամի իրացման շրջանառություն: Հետևաբար՝ պարզեցված հարկը կկազմի՝ $11.4 \text{ մլն դրամ} \times 3.5\% = 0.4 \text{ մլն դրամ}$:

- վարձակալության մասով՝ 10%.
- նոտարական գործունեության մասով՝ 20%.
- այլ գործունեության մասով՝ 5 %:

Ուշադրություն

Այլ գործունեություն է համարվում խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեությունից և վարձակալությունից տարբերվող այլ գործունեությունը (այդ թվում՝ հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների, արագամաշ առարկաների և այլ պաշարների օտարումը, ռոյալթիների, փոխառության տոկոսների ստացումը):

Փաստորեն՝ պարզեցված հարկի հաշվարկում հաշվի չեն առնվում հարկ վճարողի կողմից կատարված ծախսերը:

10.

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՇԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Պարզեցված հարկ վճարողները, մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը, իրենց հաշվառման վայրի հարկային մարմին են ներկայացնում **Պարզեցված հարկի հաշվարկ** (հավելված 2):

Պարզեցված հարկ վճարողները հարկի գումարը պետական բյուջե են վճարում մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող **ամսվա 25-ը:**

Նախորդ հաշվետու ժամանակաշրջանների համար պարզեցված հարկի ներկայացված հաշվարկներում հարկ վճարողի կողմից սխալներն ինքնուրույն հայտնաբերելու դեպքում հարկ վճարողը կարող է իր հաշվառման վայրի հարկային մարմին ներկայացնել ՀՀ ԿԱ Հարկային պետական ծառայության կողմից սահմանված ձևով **ճշգրտված հաշվարկներ**, որոնց հիման վրա օրենքով սահմանված կարգով, կատարվում է այդ ժամանակաշրջանների համար հարկային պարտավորությունների վերահաշվարկ:

Ճշգրտված հաշվարկներ չեն ներկայացվում այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնց համար հարկային մարմնի կողմից

կատարվել է կամ կատարվում է ստուգում: Այդ ժամանակաշրջանի համար պարզեցված հարկի գծով պարտավորությունները կարող են ճշգրտվել միայն ներկայացված դիմումի հիման վրա իրականացվող կրկնակի ստուգման արդյունքներով:

11.

ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԴ ԿՃԱՐՈՂԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԸՆԴԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՃԱՐՆԵՐԻ ԿՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պարզեցված հարկ վճարողների համար **պահպանվում է** գույքային հարկերի, մաքսային սահմանին գանձվող անուղղակի հարկերի, օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ պարտադիր **այլ վճարների հաշվարկման և վճարման կարգը**: Միաժամանակ՝ վճարված կամ վճարման ենթակա (հաշվեգրում) գույքային հարկերը, տուրքերը և, օրենսդրությամբ սահմանված դեպքերում, պարտադիր այլ վճարները վերագրվում են ձեռքբերման արժեքին կամ ծախսերին:
2. Պարզեցված հարկ վճարողներն ապրանքների, աշխատանքների և ծառայությունների դիմաց մատակարարներին վճարած (ապրանքների ներմուծման ժամանակ վճարած) կամ վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարները միացնում են ձեռքբերման արժեքին (ծախսերին): Պարզեցված հարկով հարկվող գործունեության մասով **հարկային հաշիվներ դուրս չեն գրվում**: Պարզեցված հարկ վճարողները, դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում ԱԱՀ-ի դրույքաչափի և գումարի վերաբերյալ նշում կատարելու (հարկային հաշիվ դուրս գրելու) դեպքում, վճարում են հաշվարկային փաստաթղթերում առանձին նշված ԱԱՀ-ի գումարը՝ առանց այդ ապրանքների մատակարարման (ծառայությունների մատուցման) համար մատակարարներին վճարած ԱԱՀ-ի գումարների նվազեցման:

ՕՐԻՆԱԿ

«Լաթար» ՍՊԸ-ն, որը պարզեցված հարկ վճարող է, վաճառում է ապրանք 120,0 հազար դրամ գումարով: Դուրս գրված հաշվարկային փաստաթղթում նշվում է նաև 20,0 հազար դրամ ԱԱՀ:

Այս դեպքում ընկերությանը հաշվարկային փաստաթղթում սխալմամբ նշված 20,0 հազար դրամ գումարով ԱԱՀ-ն ենթակա է վճարման բյուջե:

3. Պարզեցված հարկ վճարող առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում օրենսդրությամբ սահմանված դեպքերում հանդիսանում են հարկային գործակալ՝ ոչ ռեզիդենտի շահութահարկի և ոչ ռեզիդենտի ԱԱՀ-ի գծով (մասնավորապես՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 8 հոդվածի 4-րդ կետով սահմանված դեպքերում):
4. Պարզեցված հարկ վճարողները կրում են հարկային գործակալի պարտավորություններ, բացառությամբ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 21 հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետով հարկային գործակալի համար սահմանված պարտավորությունների կատարման, այսինքն՝ «չհիմնավորված» ձեռքբերումների գծով վճարված գումարներից եկամտահարկի 3% դրույքաչափով պահում չեն իրականացնում:

Ուշադրություն

Պարզեցված հարկով հարկվող անհատ ձեռնարկատերերի համար ևս գործում է հիշյալ դրույթը, բայց փաստաթղթերով չհիմնավորված ձեռքբերումների դեպքում «մեծանում է» պարտադիր սույիալական ապահովագրության հարկման բազան:

Պարզեցված հարկ վճարող **նոտարները** կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից իրենց մատուցված ծառայությունների դիմաց ստացած եկամուտների մասով **ազատվում են** աղբյուրի մոտ եկամտահարկի **պահումից**:

5. Պարզեցված հարկ վճարողները որպես գործատու և վարձու աշխատողների համար որպես գործակալ, վճարվող սույիալական վճարները վճարում են և այդ մասով հաշվետվությունները ներկայացնում են իրենց հաշվառման վայրի հարկային մարմին **ընդհանուր կարգով**⁸:

⁸ Անկախ հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնելու հանգամանքից:

6. Պարզեցված հարկ վճարող համարվող առևտրային կազմակերպությունները (անհատ ձեռնարկատերերը) շահութահարկի (եկամտահարկի) **կանխավճարներ**, ինչպես նաև շահութահարկի (եկամտահարկի) **նվազագույն գումարի ամսական վճարումներ չեն կատարում**:
7. Անհատ ձեռնարկատերերն օրենքով սահմանված կարգով ներկայացվող տարեկան եկամուտների հայտարարագրերում պարզեցված հարկի ռեժիմին վերաբերող ծախսերն ու եկամուտները **չեն ներառում**:

12. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՐԳՈՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՅԺՄԻՑ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՅԺՄԻՆ ԱՆՑՆԵԼԸ

Այն պարզեցված հարկ վճարողները, որոնք չեն իրականացնում հաստատագրված վճարով հարկվող գործունեություն, պարզեցված հարկ վճարող դառնալուն նախորդող ժամանակահատվածներից փոխանցված հաշվանցման (փոխհատուցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների մնացորդը միացնում են ծախսերին (պարզեցված հարկ վճարող համարվելու առաջին հաշվետու ժամանակաշրջանում):

Գործունեության որևէ տեսակով պարզեցված հարկ վճարող դարձած և միաժամանակ հաստատագրված վճարով հարկվող գործունեություն իրականացնող անձինք որպես այդպիսիք դառնալու պահին նախորդող ժամանակահատվածներից փոխանցված հաշվանցման (փոխհատուցման) ենթակա ԱԱՀ-ի գումարների մնացորդը, որը վերաբերում է պարզեցված հարկով հարկվող գործունեության մեջ օգտագործվող ձեռքբերումների (մասնավորապես՝ ապրանքային) մնացորդներին, միացնում են ծախսերին (տվյալ գործունեության մասով պարզեցված հարկ վճարող համարվելու առաջին հաշվետու ժամանակաշրջանում):

Պարզեցված հարկի ընդհանուր գումարի մեջ ԱԱՀ-ի հաշվարկային մեծությունն ընդունվում է 60% և շահութահարկի (եկամտահարկի) հաշվարկային մեծությունը՝ 40%:

13.

ՊԱՐԶԵՑՎԱԾ ՇԱԽԻ ՌԵԺԻՄԻՑ ՇԱՐԿՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՌԵԺԻՄԻՆ ԱՆՑՆԵԼԸ

Պարզեցված հարկով հարկման ռեժիմից հարկման ընդհանուր ռեժիմին անցնելու պահից, տվյալ տարվա մնացած ժամանակահատվածում, հարկ վճարողները շահութահարկը (եկամտահարկը), այդ թվում՝ կանխավճարները և ԱԱՀ-ն հաշվարկում և վճարում են օրենսդրությամբ սահմանված **ընդհանուր կարգով**:

Պարզեցված հարկով հարկման ռեժիմից հարկման ընդհանուր կարգով հարկման ռեժիմին անցնելու պահից ԱԱՀ-ով հարկվող շրջանառության նկատմամբ հաշվարկված ԱԱՀ-ի գումարներից չեն հաշվանցվում պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակահատվածում մատակարարների հարկային հաշիվներում, ինչպես նաև մաքսային մարմիններում վճարված (վճարման ենթակա), առանձնապես ԱԱՀ-ի գումարները:

Ընթացիկ տարում պարզեցված հարկով հարկման ռեժիմից հարկման ընդհանուր ռեժիմին անցնելիս հարկ վճարողները շահութահարկի (եկամտահարկի) կանխավճարները հաշվարկում են նախորդ տարվա շահութահարկի (եկամտահարկի) և (կամ) պարզեցված հարկի գումարում ներառված (40% համամասնությամբ որոշվող) շահութահարկի (եկամտահարկի) գումարի հիման վրա՝ օրենքով սահմանված **ընդհանուր կարգով**: Այդ դեպքում շահութահարկի (եկամտահարկի) կանխավճարները հաշվարկվում և վճարվում են պարզեցված հարկ վճարող լինելու դադարեցման պահից «Շահութահարկի մասին» («Եկամտահարկի մասին») ՀՀ օրենքով կանխավճարների համար սահմանված առաջիկա ժամկետում և չափերով:

ՕՐԻՆԱԿ

«Լաթար» ՍՊԸ-ն 2007թ. նոյեմբերի 5-ին դադարում է լինել պարզեցված հարկ վճարող: 01.01.2007–05.11.2007 ժամանակահատվածում հաշվարկված և վճարված պարզեցված հարկը կազմել է 1.000,0 հազար դրամ, որում շահութահարկին բաժին ընկնող մասը կազմում է 400,0 հազար դրամ (1.000,0 հազար դրամ x 40%): 05.11.2007–31.12.2007 ժամանակահատվածում իրականացված գործունեությունից շահութահարկը կազմել է 160,0 հազար դրամ: Հետևաբար՝ 2008թ. ընթացքում շահութահարկի ամսական կանխավճարի մեծությունը կկազմի 35,0 հազար դրամ { (400,0+160,0)/16 }:

Եթե անհատ ձեռնարկատերը տվյալ տարվա մի մասի ընթացքում համարվել է պարզեցված հարկ վճարող, հարկման ընդհանուր ռեժիմին անցնելիս եկամտահարկի դրույթաչափը որոշվում է տվյալ տարում պարզեցված հարկ վճարող համարվելու ժամանակաշրջանում հաշվարկված վճարման ենթակա պարզեցված հարկի գումարում ներառված (40% համամասնությամբ որոշվող) եկամտահարկի գումարին համապատասխանող հաշվարկային եկամտի՝ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածով սահմանված աղյուսակով:

Ուշադրություն

Քանի որ պարզեցված հարկը փոխարինում է ԱԱՀ-ին և շահութահարկին (եկամտահարկին), ապա այդ հարկատեսակների համար սահմանված են առանձնահատկություններ՝ հարկման ռեժիմների փոփոխման դեպքերում:

Շահութահարկի (եկամտահարկի) հաշվառումը՝ պարզեցված հարկով հարկման ռեժիմին անցնելիս (և հակառակը), մինչ այդ՝

- ստացած հարկային վնասը «սառեցվում է» և կարող է նվազեցվել համախառն եկամտից հետագայում հարկման ընդհանուր ռեժիմին անցնելիս, հաշվի առնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետային սահմանափակումը (5 տարի),
- ընդհանուր կարգով հարկման ռեժիմի ընթացքում ակտիվների ձեռքբերման արժեքը, որոնք դեռևս չեն օտարվել, կարող են նվազեցվել համախառն եկամտից հարկման ընդհանուր ռեժիմին անցնելիս՝ ընդհանուր սահմանված կարգով:

Պարզեցված հարկով հարկման ժամանակ կատարված ծախսերը, հարկման ընդհանուր կարգով հարկման ռեժիմին անցնելիս, հարկ վճարողի համախառն եկամտից ենթակա չեն նվազեցման:

Եթե հարկ վճարողը պարզեցված հարկ վճարող լինելու դադարեցման հիմքերի առկայության դեպքում շարունակում է համարել իրեն պարզեցված հարկ վճարող և կատարված գործողությունները ձևակերպում է որպես այդպիսին, ապա այդ փաստը ստուգմամբ հայտնաբերվելու դեպքում պարզեցված հարկ վճարող լինելու դադարեցման սահմանված ժամկետներից սկսած՝ հարկերը հաշվարկվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով: Այդ դեպքում հարկ վճարողի կողմից հաշվարկված պարզեցված հարկի գումարները հաշ-

վանցվում են ընդհանուր սահմանված կարգով հաշվարկված շահութահարկի (եկամտահարկի) և ԱԱՀ-ի (40% և 60% համամասնությամբ):

14. ՊԱՐԳԵՑՎԱԾ ԸԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄՑ ՎԱՐՎՈՂ ԸՆԾՎԱՌՈՒՄԸ

Պարգեցված հարկ վճարող հանդիսացող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը գործունեության այդ մասով վարում են **եկամտուտների և ծախսերի հաշվառման գիրք** (հավելված 3), իսկ պարգեցված հարկ վճարող հանդիսացող նոտարներն, այդպիսին համարվելու հաշվետու ժամանակաշրջանում, գործունեության այդ մասով վարում են **նոտարական գործողությունների գրանցման գրանցամատյան**, որը եկամտուտների և ծախսերի հաշվառման գրքի ամփոփ ձևն է (հավելված 4):

Պարգեցված հարկ վճարող առևտրային կազմակերպությունները **վարում են նաև դրամարկղային գրքեր:**

Ուշադրություն

Պարգեցված հարկ վճարողներն առաքվող (տեղափոխվող) ապրանքների գրանցման (հաշվառման) գրքեր, արտադրանքի (ապրանքների) և դրանց գների (հասույթի) գրանցման (հաշվառման) գրքեր կարող են չվարել⁹:

Պարգեցված հարկ վճարողները **պարտավոր են վարել հաշվապահական հաշվառում¹⁰**, սակայն հաշվապահական (ֆինանսական) հաշվետվություններ հարկային մարմին չեն ներկայացնում: Մասնավորապես՝ շահաբաժինները հիմնավորելու համար հաշվապահական հաշվառման վարումն անհրաժեշտություն է՝ այլապես հիմնադիրներին (մասնակիցներին) վճարվող «շահաբաժինները» կարող են չդիտվել որպես այդպիսին և հարկվել եկամտահարկով, եթե եկամտ ստացողները ֆիզիկական անձինք են:

Պարգեցված հարկ վճարողները հարկման ընդհանուր ռեժիմին անցման պահից **պարտավոր են** վարել օրենսդրությամբ սահմանված համապատասխան հաշվառում:

9 ՀՀ կառավարության 1997թ. հուլիսի 31-ի թիվ 314 և թիվ 315 որոշումներ:

10 Տե՛ս՝ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք:

<p>ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ (պարզեցված հարկ վճարող համարվելու համար)</p>	<p>Փաստաթղթերի հերթական համարը <i>(լրացվում է հարկային մարմնի կողմից)</i></p>					
<p>1. Հարկ վճարողի հաշվառման համարը</p>						
<p>2. Անհատ ձեռնարկատիրոջ կամ նուտարի անունը, ազգանունը</p>	<p>3. Առևտրային կազմակերպության անվանումը</p>					
<p>4. Գտնվելու վայրը (բնակության վայրը)</p>	<p>5. Հեռախոսի համարը</p>					
<p>Հանդիսանալու են պարզեցված հարկ վճարող</p>						

Սույնով հայտարարում եմ, որ.

- ա) ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով նախորդ տարում մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների և մատուցված ծառայությունների իրացման շրջանառության (առանց ԱԱՀ-ի) ընդհանուր գումարը չի գերազանցել 50,0 մլն. դրամը
- բ) տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունները (այդ բովում՝ տույժերը և տուգանքները) կազմում են 100,0 հազ. դրամից պակաս գումար
- գ) նախորդ տարում Հայաստանի Հանրապետություն «ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների (դրոնց համար ԱԱՀ վճարված չի եղել ներմուծման պահին) չիրացված մաքսային արժեքով հաշվարկված մնացորդը տվյալ տարվա հունվարի 1-ի դրությամբ չի գերազանցում 1,0 մլն. դրամը
- դ) չեմ հանդիսանում ակցիզային հարկով (դրա փոխարեն՝ հաստատագրված վճարով) հարկվող ապրանքների արտադրող
- ե) չեմ հանդիսանում բանկ, գրավատուն, վարկային կամ ապահովագրական կազմակերպություն, ներդրումային հիմնադրամ, արժեթղթերի շուկայում մասնագիտացված մասնակից, արտարժույթի առքուվաճառքի, արտարժույթի դիլերային առքուվաճառքի գործունեություն իրականացնող, խաղատների, շահումով խաղերի կամ վիճակախաղերի կազմակերպիչ
- զ) ձեռնարկատիրական գործունեության բոլոր տեսակների մասով չեմ իրականացնում իրավունքի, հաշվապահական հաշվառման և աուդիտի բնագավառի գործունեություն, առևտրային գործունեության և կառավարման հարցերով խորհրդատվություն, հանքագործական արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և բաշխման, կապիտալ շինարարության իրականացման, կապիտալ շինարարության բնագավառում քաղաքաշինության փաստաթղթերի մշակման կամ ինժեներական հետազննման և փորձաքննության գործունեություն

- է) չեմ հանդիսանում գյուղատնտեսական արտադրանք արտադրող
 - ը) չեմ հանդիսանում համատեղ գործունեության պայմանագրի կողմ
 - թ) կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) չի պատկանում այլ պարզեցված հարկ վճարող առևտրային կազմակերպության
 - ժ) կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) չի պատկանում այլ պարզեցված հարկ վճարող անհատ ձեռնարկատիրոջ
 - ժա) կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը) չի պատկանում այլ անձի, որին միաժամանակ պատկանում է պարզեցված հարկ վճարող այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժինը (բաժնետոմսը, բաժնենասը)
 - ժբ) չեմ հանդիսանում պարզեցված հարկ վճարող այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալի 50% և ավելի փայաբաժնի (բաժնետոմսի, բաժնենասի) սեփականատեր
- Տեղյակ եմ սույն հայտարարագրի մեջ տրվող ոչ ճիշտ տեղեկությունների համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվությանը

Հարկ վճարողի (պատասխանատու անձի) ստորագրություն	Հարկ վճարողի կնիքը	Հարկային (տարածքային) տեսչության պետ՝ Տեսուչ՝
---	--------------------------	---

Հայտարարագրի ներկայացման ժամկետը «__» _____ 200__թ.

Հայտարարագիրը լրացվում է 2 օրինակից, որոնք ներկայացվում են հարկ վճարողի հաշվառման (գրանցման) վայրի ՀՏ: Հայտարարագիրն առձեռն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ ՀՏ-ի կողմից գրանցելույց հետո մեկ օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

Հայտարարագրի լրացման կարգը

- [1] Լրացվում է ՀՀ հարկային մարմինների կողմից տրամադրված հարկ վճարողի հաշվառման համարը(ՀՎՀՀ)
- [2] Լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ նուտարի անունը, ազգանունը
- [3] Լրացվում է առևտրային կազմակերպության լրիվ անվանումը
- [4] Լրացվում է հարկ վճարողի գտնվելու վայրը (անհատ ձեռնարկատիրոջ կամ նուտարի համար՝ բնակության վայրը)
- [5] Լրացվում է հարկ վճարողի աշխատանքային (անհատ ձեռնարկատիրոջ կամ նուտարի համար՝ բնակության վայրի) հեռախոսահամարը

ԸԱՎԵԼՎԱՆ 2

«Պարզեցված հարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգի

Պարզեցված հարկի հաշվարկ	Փաստաթղթի հերթական համարը <hr/> (լրացվում է հարկային մարմնի կողմից)								
1. Հարկ վճարողի հաշվառման համարը	<table border="1" style="width: 100%; height: 20px; border-collapse: collapse;"> <tr> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> <td style="width: 12.5%;"></td> </tr> </table>								
2. Անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը	3. Առևտրային կազմակերպության անվանումը								
4. Հասցեն (բնակության վայրը)	5. Հեռախոսի համարը								
6. Հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջան՝ 200 թ. եռամսյակ									

- [1]-Լրացվում է ՀՀ հարկային մարմինների տրամադրած հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)
- [2]-Լրացվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի անունը, ազգանունը
- [3]- Լրացվում է առևտրային կազմակերպության լրիվ անվանումը
- [4]- Լրացվում է հարկ վճարողի գտնվելու (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի համար՝ բնակության) վայրը
- [5]- Լրացվում է հարկ վճարողի աշխատանքային (անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի համար՝ բնակության վայրի) հեռախոսահամարը
- [6]- Լրացվում է հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանը (ճշգրտման դեպքում աջ սյունակում կատարվում է «X» նշագրումը)

(հազար դրամ)

Գործունեության տեսակ	Իրացման շրջանառություն [7]	Գրույքաչափ [8]	Հարկի գումարը [9]
10. Խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեություն		3.5%	
11. Վարձակալություն		10.0%	
12. Այլ գործունեություն		5.0%	
13. Նոտարական գործունեություն		20.0%	
14. Ընդամենը		X	

- [7] սյունակում նշվում է հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանում պարզեց-

ված հարկով հարկվող գործունեության իրացման շրջանառությունը

- [8] սյունակում նշվում է հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանում պարզեցված հարկով հարկվող գործունեության յուրաքանչյուր տեսակի համար պարզեցված հարկի դրույթաչափը
- [9] սյունակում նշվում է հաշվետու (ճշգրտման) ժամանակաշրջանում պարզեցված հարկի գումարը ([10], [11], [12] և [13] տողերում՝ սյունակ[9]=սյունակ[7]xսյունակ[8])
- [10], [11] և [12] տողերում նշվում է պարզեցված հարկ վճարողի կողմից իրականացվող խանութների, կրպակների (տաղավարների) միջոցով առևտրական գործունեության, վարձակալության և այլ գործունեության մասով իրացման շրջանառությունը, պարզեցված հարկի դրույթաչափը և գումարը
- [13] տողում նշվում է նոտարիների կողմից իրականացվող նոտարական գործունեության մասով իրացման շրջանառությունը, պարզեցված հարկի դրույթաչափը և գումարը
- [14] տողում նշվում է պարզեցված հարկով հարկվող գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը և պարզեցված հարկի գումարը (տող[10]+տող[11]+տող[12]+տող[13])

Հարկ վճարողի
(պատասխանատու անձի)
ստորագրություն

Հարկ
վճարողի
կնիքը

Հարկային (տարածքային) տեսչության
պետ՝
Տեսուչ՝

Հաշվարկի ներկայացման ժամկետը « ____ » _____ 200__թ.

Հաշվարկը լրացվում է 2 օրինակից, որոնք ներկայացվում են հարկ վճարողի հաշվառման (գրանցման) վայրի ՀՏ: Հաշվարկն առձեռն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ ՀՏ-ի կողմից գրանցվելուց հետո, 1 օրինակը հանձնվում է հարկ վճարողին:

ՀԱՎԵԼՎԱԾ 3
ԵՎԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՆԵՐԻ ՀԱՃՎԱՌՄԱՆ ՉՐԵՒ ԷՋ

N N ը/վ	Ամիսը, ամսաթիվը	Գործարքի (գործառնություն) բովանդակու- թյունը	Սկզբնական փաստաթղթի անվանումը և հերթական հա- մարը	Կատարված (հաշվարկված) ուղղակի ծախսերը (հազ. դրամ)	Կատարված (հաշվարկված) ընդհանուր սնունդնական ծախսերը (հազ. դրամ)	Հաշվարկված եկամուտները՝ իրացման շրջա- նառաջությունը (հազ. դրամ)	Հաշվարկված եկամուտները (հազ. դրամ)
1	2	3	4	5	6	7	8
1.							
2.							
3.							
4.							
5.							
6.							
7.							
8.							
9.							
10.							
11.							
12.							
13.							
14.							
15.							

ՆԱԿԵԼՎԱՆ 4

N	Նոտարական գործողության կամ ծախսի կատարման անսարժիլը, ամիսը, տարեթիվը	Անձանց կամ նրանց մերկայացումը, ցույցիցների ազգանունը, անունը, հայրանունը և բնակության վայրը, որոնց համար կատարված է նոտարական գործողությունը կամ նրանց գծով կատարված են ծախսեր	Նոտարական գործողությանը ներկայացած անձի ինքնությունը հաստատող փաստաթուղթը կամ ծախսի կատարումը հաստատող ակզբնական փաստաթուղթը	Նոտարական գործողության կամ կատարված ծախսի բովանդակությունը
1	2	3	4	5
1				
..				
10				

N	Գանձված է պետական տուրք կամ նշում պետական տուրքի վճարումից ազատված լինելու մասին (դրամ)	Նոտարի կողմից մատուցվող վճարովի ծառայություններից ստացված եկամուտներ (դրամ)	Նոտարի կողմից կատարված ծախսեր (դրամ)	Ստորագրություն նոտարական կարգով վավերացված փաստաթուղթը ստանալու մասին
1	6	7	8	9
1				
..				
10				

**ՀԱՐԿԵՐԸ ԵՎ ՁԵՐ ԲԻՋՆԵՍԸ
ՊԱՐՁԵՑՎԱԾ ՀԱՐԿՄԱՆ ՈՒԺԻՍ**

Մինչտպագրական աշխատանքներ՝ «ԳԱՐ» ՍՊԸ
Տպագրություն՝ «ԷԳԻԹ ՊՐԻՆՏ» ՍՊԸ
Տպաքանակ՝ 10 000